



Funded by
the European Union



ԻՐԱԿԱՆ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ

ՈՒՂԵՑՈՒՅՑ

ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ
ԵՎ ՀԵՏԱԶՉՈՏՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ



ԻՐԱԿԱՆ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ուղեցույցը պատրաստվել և հրապարակվել է «Ինֆորմացիայի ազատության կենտրոն ՀԿ»-ի կողմից «Տեղեկատվության Իմաստելիության բարեփոխում և իրական շահառուների թափանցիկությունը Հայաստանում» ծրագրի շրջանակներում: Այն ֆինանսավորվել է Եվրոպական միության կողմից «Արևելյան գործընկերություն. Բաց դռների դրամաշնորհներ» ենթադրամաշնորհային նախագիծը՝ «ԵՄ-ն բարեվարքության համար» ծրագրի շրջանակներում: Ուղեցույցի բովանդակության պատասխանատուն բացառապես Ինֆորմացիայի ազատության կենտրոնին է, և պարտադիր չէ, որ այն արտացոլի Եվրամիության տեսակետները:

© ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԵՐԵՎԱՆ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ..... 3

ԻՐԱԿԱՆ ՇԱՀԱՌՈՒՄԻ ՄԱՀՄԱՆՈՒՄԸ..... 5

ԻՐԱԿԱՆ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՌԵԳԻՍՏՐԻ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ..... 8

ԻՐԱԿԱՆ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԵՎ ՀԵՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ.....20

ԻՐԱԿԱՆ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՄԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ.....23

ՈՐՏԵ՞Ղ ԵՎ ԻՆՉՊԵ՞Ս ԵՆ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՒՄ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԵՐԸ.....28

ԻՐԱԿԱՆ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԵՎ ՀԵՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ.....30

 ԻՆՉՊԵ՞Ս ՄՍՏԱՆԱԼ/ՄՏՈՒԳԵԼ ՏՎՅԱԼՆԵՐ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ35

 ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ36

 ԻՆՉՊԵ՞Ս ՄՍՏԱՆԱԼ/ՄՏՈՒԳԵԼ ՏՎՅԱԼՆԵՐ ԱՆՁԻ ՄԱՍԻՆ40

 ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԵՐԻ ՌԵԵՍՏՐ.....41



ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանը սկսած 2017-ից, ստանձնելով մի շարք միջազգային հանձնառություններ, գործընթաց սկսեց իրական շահառուների բացահայտման արդյունավետ համակարգ ստեղծելու ուղղությամբ: Ընդունված օրենսդրական փոփոխություններով ի սկզբանե իրական շահառուների տվյալները բացահայտելու պարտավորություն դրվեց մետաղական հանքարդյունաբերության ոլորտում գործունեություն իրականացնող ընկերությունների վրա: Այնուհետև աստիճանաբար իրական շահառուների հայտարարագրման համակարգին միացան հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտի կազմակերպությունները, տեսալսողական մեդիածառայություն մատուցող կազմակերպությունները և առևտրային կազմակերպություններն ու այլ իրավաբանական անձինք:

2023-ի հունվարի 1-ից արդեն փաստացի Հայաստանում գրանցված բոլոր իրավաբանական անձինք, բացառությամբ ՀՀ առևտրային բանկերը, պարտավոր են ներկայացնել իրենց իրական շահառուների մասին հայտարարագրեր:

Հարկային հայտարարագրերի և իրական շահառուների թափանցիկությունը կոռուպցիայի կանխարգելման կարևորագույն մեխանիզմներից են: Լրագրողների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների կողմից վերջին տարիներին կատարած հետաքննություններն ու բացահայտումները այս խնդիրն առավել արդիական և հրատապ են դարձրել: Մինևույն ժամանակ, այս բացահայտումները առավել ակներև են դարձրել, որ հարկերից խուսափելը և իրական շահառուների թաքցնելն ոչ միայն ինքն իրենով ֆինանսական հանցագործություն է, այլև մատնանշում են կոռուպցիայի և փողերի լվացման բազմաշերտ շղթայի առկայության մասին, որը զգալի վնաս է հասցնում ամբողջ հասարակությանը:

Հետաքննող լրագրողները և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները կարող են կարևոր ներդրում ունենալ այս ոլորտում թափանցիկ պրակտիկայի ներդրման գործում:

Այս ուղեցույցի նպատակն է լրագրողներին, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներին, հետազոտողներին և այլ շահագրգիռ կողմերին ներկայացնել մի շարք պրակտիկ գործիքներ, հմտություններ ու խորհուրդներ, որոնց միջոցով հնարավոր կլինի բացահայտել իրական շահառուներին և հետաքննել նրանց ետևում գտնվող կազմակերպությունների գործունեությունը:

Ուղեցույցում ներկայացվում են իրական շահառուների հայեցակարգի, թափանցիկության չափանիշների և աշխարհում այս հարցով իրականացված գործընթացների, Հայաստանում և տարբեր երկրներում գործող ռեզիստրների, միջազգային կազմակերպությունների կողմից ստեղծված հարթակների մասին տեղեկություններ:

**Իրական շահառուների հայտարարագրերը Հայաստանում
բաց են հանրության համար:**

ԻՐԱԿԱՆ ՇԱՀԱՌՈՒՄԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ

Կազմակերպության իրական շահառուն (ԻՇ) այն անհատն է, ում սեփականության իրավունքով պատկանում են ընկերության բաժնետոմսեր (բաժնեմաս) կամ այն անհատը, որը այլ միջոցներով վերահսկում է կազմակերպությունը: Այսինքն.

Իրական շահառուներն իրական ֆիզիկական անձինք են, որոնք կանգնած են ընկերության սեփականության շղթայի վերջում:

Բավարար մասնակցության կամ վերահսկողության առկայության մասին կարող են վկայել բազմաթիվ հանգամանքներ: Ընդ որում, բավարար մասնակցության տեսանկյունից միջազգային չափանիշը պահանջում է 25% շեմի օգտագործում, չնայած պետություններն ազատ են օգտագործել ավելի ցածր շեմ (օրինակ Հայաստանում օգտագործվում է հանքարդյունաբերության ոլորտում՝ 10%, իրավաբանական՝ 20% շեմը):

Իրական շահառուները

- վերահսկողություն են իրականացնում իրավաբանական անձի նկատմամբ, և/կամ
- ուղղակի կամ անուղղակի կերպով ունեն մասնակցություն (բաժնետոմսեր կամ բաժնեմասեր) կազմակերպության կանոնադրական կապիտալում,
- իրականացնում են կազմակերպության ընդհանուր կամ ընթացիկ ղեկավարումը
- ունեն դրա վերջնական սեփականության մասնաբաժինը, և/կամ
- դրանից շահույթ են ստանում:



Իրական շահառուն ընկերության շահառուներից տարբերվում է: Եթե ընկերության բաժնեմասը (բաժնետոմսերը) պատկանում են անհատի, ապա ընկերության մասնակիցը և ընկերության իրական շահառուն կարող են համընկնել: Միննույն ժամանակ, ընկերության բաժնետեր կարող է լինել նաև մեկ այլ ընկերություն: Այդպիսի դեպքերում ընկերության իրական շահառուն այն անհատն է, որը գտնվում է այդ ընկերության սեփականության շղթայի վերջում :

Ընկերությունները ևս կարող են լինել ընկերության անմիջական, իրավական շահառուները, բայց միայն մարդիկ կարող են լինել իրական շահառու:

Վերջին տարիներին ամբողջ աշխարհում շահերի բախման և կոռուպցիայի բացահայտված դեպքերը ակնհայտ դարձրին, որ իրական շահառուների թափանցիկությունը օգնում է բացահայտել ոչ միայն կոռուպցիայի, այլև մարդկանց թրաֆիքինգի, երեխաների հարկադիր աշխատանքի, թմրամիջոցների ապօրինի շրջանառության, ահաբեկչության ֆինանսավորման և այլնի դեպքերը: Ուստի իրական շահառուներին թաքցնելը պետության համար խնդիրներ է ստեղծել ինչպես տնտեսական, այնպես էլ իրավական տեսանկյունից: Որևէ ընկերությունում ունեցած մասնակցությունը չբացահայտելու նպատակով իրավաբանական անձանց բազմաշերտ շղթա ստեղծելը իրական շահառուներին թաքցնելու ամենատարածված մեթոդներից է: Սա հաճախ խոչընդոտում է արդյունավետ և արդար հետաքննությանը:



Օֆշորային երկրները, որտեղ ընկերությունների շահառուները առավել հեշտ են թաքցնում իրենց ինքնությունը՝ համաձայն իրավական կանոնակարգերի, կարևոր դեր են խաղում ունեցվածքը թաքցնելու գործում: Կան բազմաթիվ գործոններ, որոնք գրավիչ են դարձնում ընկերությունների գրանցումը օֆշորային գոտիներում: Առաջին հերթին դա ենթադրում է հարկային արտոնություններ: Ավելին, գրանցված ընկերությունից չի պահանջվում լինել տվյալ երկրի ռեզիդենտ կամ օֆշորային գոտում ունենալ ֆիզիկական գրասենյակ/մասնաճյուղ: Հայկական համատեքստում առկա են բազմաթից օրինակներ, երբ Հայաստանում գույք ունեցող ընկերությունները, այդ թվում՝ պետական գույք և ռազմավարական տարբեր օբյեկտներ (օրինակ՝ հանքեր, ՀԷԿ-եր և այլ օբյեկտներ), գրանցված են օֆշորային գոտիներում, մինչդեռ դրանց վերաբերյալ

ցանկացած տեղեկատվություն ձեռք բերելը հսկայական մարտահրավեր է ¹:

2017թ.-ին Եվրամիությունը ստեղծել է երկրների և իրավասությունների ցուցակ (այսպես կոչված սև ցուցակ), որոնք համարվում են հարկային քաղաքականության մեջ չհամագործակցող դերակատարներ, ցանկը շարունակաբար թարմացվում է: 2023 թվականի դրությամբ ցուցակը ներառում է 16 երկիր, այդ թվում՝ Ամերիկյան Սամոա, Ֆիջի, Գուամ, Պալաու, Պանամա, Սամոա, Տրինիդադ և Տոբագո, ԱՄՆ Վիրջինյան կղզիներ, Ռուսաստան, Վանուատու և այլն²: Կոռուպցիայի և փողերի լվացման ամենաաղմկահարույց դեպքերն են կապված սև ցուցակում գտնվող երկրների հետ:



¹ Կարդացե՛ք ՍիվիլՆեթի հետաքննությունը. Ովքե՞ր են Չանգեգուրի պղնձամոլիբդենայինի բաժնետերերը:

² [EU list of non-cooperative jurisdictions for tax purposes - Consilium \(europa.eu\)](https://consilium.europa.eu/en/press/infographic/eu-blacklist/)

Իրական շահառուների ռեգիստրի կարևորությունը

Վերջին տասնամյակի ընթացքում իրական շահառուների թափանցիկության հարցը դարձել է համաշխարհային օրակարգի կարևոր մաս, ձևավորվել է բավականին հազեցած իրավական ու ինստիտուցիոնալ բազա իրական շահառուների բացահայտման գործընթացում: Գործընթացի միջազգային իրավական հենքը կազմում են [ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիան](#) (2004), ԵՄ «Փողերի լվացման դեմ» [դիրեկտիվը](#) և այլ փաստաթղթեր, ներառյալ՝ «Փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման և զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորման դեմ պայքարի» միջազգային [ստանդարտները](#) (ՖԱԹՖ, 2012):

Այն առանձնահատուկ ուշադրության արժանացավ, երբ G20 երկրները 2014-ին ընդունեցին իրական շահառուների վերաբերյալ [սկզբունքներ](#), որով անդամները միաձայն համաձայնեցին՝ իրական շահառուների թափանցիկությունը առաջնահերթություն դարձնելու և կենսական քայլեր ձեռնարկելու

անհրաժեշտությունը, օրինակ, միասնական ռեգիստրի ստեղծման ուղղությամբ:

Իրական շահառուների ռեգիստրի ստեղծումը իրական սեփականատերերի թափանցիկությունն ապահովելու լայն տարածում ունեցող և արդյունավետ միջոց է:

Կենտրոնացված հանրային ռեգիստրը շահագրգիռ կողմերին հնարավորություն է տալիս տեղեկատվություն ստանալ ընկերությունների իրական շահառուների ինքնության վերաբերյալ: Հանրային ռեգիստրի ստեղծումը՝ որպես ամենաարդյունավետ մեխանիզմներից մեկը, պաշտպանում է ինչպես միջազգային կազմակերպությունները/նախաձեռնությունները, այնպես էլ առանձին պետությունները:



Իրական շահառուների թափանցիկության չափանիշների բարձրացումը հատկապես մեծապես աջակցվում է ԵՄ-ի կողմից, որն ընդունել է կարևոր հրահանգներ՝ փողերի լվացման կանխարգելման, ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի և թաքնված շահառուների հայտնաբերման վերաբերյալ: Այս առումով առաջին շոշափելի քայլը Եվրահանձնաժողովն արեց 2015թ_ին՝ 4-րդ հրահանգի ընդունմամբ, որով բոլոր անդամ պետություններից պահանջվում էր ստեղծել իրական շահառուների ռեգիստր, որտեղ պետք է հավաքագրվեր և պահպանվեր բավարար, ճշգրիտ և արդիական տեղեկություններ տվյալ երկրի օրենսդրության համաձայն ստեղծված առևտրային և այլ կազմակերպությունների իրական շահառուների վերաբերյալ:

2018թ.-ին ընդունվեց Փողերի լվացման դեմ պայքարի ԵՄ 5-րդ հրահանգը, որը անդամ երկրների կողմից

պետք է իմպլեմենտացվեր 2020թ.-ին, զարգացնում է կենտրոնական ռեգիստրների գաղափարը՝ նախատեսելով, որ դրանք պետք է լինեն բաց և որոշ տվյալներ հասանելի լինեն հանրությանը:

Այնուամենայնիվ, ԵՄ անդամ 3 երկիր (Իտալիա, Հունգարի, Լիտվա) դեռևս չունեն իրական շահառուների վերաբերյալ տեղեկություն պարունակող որևէ ռեգիստր:





Բրիտանական փորձը

Մեծ Բրիտանիան աշխարհում առաջին երկրներից է, որ ստեղծել է ընկերությունների իրական սեփականատերերի [հանրային ռեգիստր](#)՝ դեռ 2016 թ.-ին: 2015թ.-ին ընդունված օրենքի (SME and Employment Act) հիման վրա մշակվել է ընկերությունների գրանցման հանրամատչելի տվյալների բազա, որտեղ ներառված են տվյալներ այն ֆիզիկական անձանց մասին, որոնք տարբեր ընկերություններում ունեն նշանակալի վերահսկողություն:

Ռեգիստրի նպատակն էր լուծել միջազգային ընկերություններում կոռուպցիայի և հարկերից խուսափելու խնդիրը:

Ռեգիստրում առկա է ընկերության բնութագիրը, գրանցումների պատմությունը, ընկերության գործող վարկերը, վճարման ենթակա տուրքերը, ինչպես նաև

գրանցված ղեկավարների և իրական շահառուների՝ «նշանակալի վերահսկողություն ունեցող անձանց» ցանկը:

CHAARAT GOLD SERVICES LIMITED
Company number **11488741**

[Follow this company](#) [File for this company](#)

Overview [Filing history](#) [People](#) [More](#)

Registered office address
12 West Links Tollgate, Chandler's Ford, Eastleigh, England, SO53 3TG

Company status
Active

Company type
Private limited Company


Incorporated on
30 July 2018

Ռեգիստրում ընկերության վերաբերյալ հասանելի տեղեկությունները

Ինչպես տեսնում ենք օրինակում՝ որոնման համակարգն ունի մի քանի բաժիններ, ներառյալ՝ ընկերության պատմությունը և փոխկապակցված անձինք:

Նշանակալի վերահսկողություն ունեցող անձը սահմանվում է որպես ցանկացած ֆիզիկական անձ, որն ունի ընկերության 25%-ից ավելի բաժնեմաս կամ որին պատկանում է ընկերության քվեարկող իրավունքների ավելի քան 25%-ը, ինչպես նաև այն ֆիզիկական անձը, որն ունի ընկերության տնօրենների խորհրդի անդամների մեծամասնությանը նշանակելու կամ պարտականություններից ազատելու իրավունք, ինչպես նաև, երբ տվյալ անձն իրավունք ունի էական վերահսկողություն իրականացնել (կամ փաստացի իրականացնում է) մեկ այլ ընկերության կամ թրաաթի նկատմամբ ([Companies Act 2006](#)):


Բացի այդ, Մեծ Բրիտանիան նմանատիպ պարտավորություն է պարտադրում օտարերկրյա ընկերություններին, որոնք բիզնես ներկայություն ունեն երկրում:





Ուկրաինական փորձը

Ուկրաինան 2015թ.-ի սեպտեմբերին դարձավ առաջին երկիրը, որ բոլոր ընկերությունների համար պարտադիր դարձրեց իրական շահառուների մասին տեղեկությունների ներկայացումը (օրենքն ընդունվել էր դեռ 2014-ին): [Օրենսդրությամբ](#) սահմանված է, որ տվյալները հավաքագրվում են իրավաբանական անձանց, անհատ ձեռնարկատերերի և հանրային կազմակերպությունների միասնական պետական ռեգիստրում: Հայտարարագիր ներկայացնելու պահանջ դրվեց նաև այն ընկերությունների վրա, որոնք գրանցվել էին մինչև իրական շահառուների բացահայտման մասին օրենքի ընդունումը:



The screenshot shows the search interface of the Ministry of Justice of Ukraine. At the top, it features the Ukrainian coat of arms and the text "MINISTRY OF JUSTICE OF UKRAINE" and "United state register of legal entities, individual entrepreneurs and public organizations". Below this, there is a search bar and a "Free search of information in the Unified State Register of Legal Entities, Individual Entrepreneurs and Public Organizations" section. A note states: "A free search in the EDR offers from providing information from the registry on a paid basis. You can read more about the search criteria and the information included in the free search on the 'information' page." There is a search icon and a "Get information about:" section with three radio button options: "An individual entrepreneur", "Legal entity" (which is selected), and "A separate subdivision of a legal entity". At the bottom, there is a field for "Full name / Abbreviated name / EDRPOU code".

Ուկրաինական օրենսդրության համաձայն, իրական շահառու է համարվում այն ֆիզիկական անձը, որը

- ուղղակի կամ անուղղակ, ինքնուրույն կամ այլ ֆիզիկական անձանց հետ միասին, տիրապետում է բաժնետոմսերի կամ ձայնի իրավունքի առնվազն 25%-ին,
- ուղղակի կամ անուղղակի վերջնական վերահսկողություն է իրականացնում կառավարման կամ ձեռնարկատիրական գործունեության նկատմամբ
- կամ վերահսկում է ընկերության կողմից պայմանագրի ստորագրումը
- կամ իրավունք ունի տալ պարտադիր ցուցումներ կամ կատարել կառավարման մարմնի գործառույթներ:



Ուկրաինայի [միասնական պետական ռեգիստրը](#) պարունակում է տեղեկատվություն իրական շահառուների մասին՝ նշելով նրանց անունը, ազգանունը, հայրանունը (եթե այդպիսիք կան), ծննդյան ամսաթիվը, քաղաքացիությունը, բնակության վայրը, նույնականացման և անձնագրի համարները և այլն: Եթե ընկերությունը չունի իրական շահառու, ապա այդ փաստը, ինչպես նաև իրական շահառու չունենալու պատճառը պետք է հրապարակվի ընկերությունների ռեգիստրում (Sayenko Kharenko, 2020):

2019թ. իրականացված օրենսդրական փոփոխությունների համաձայն՝ ուժի մեջ են մտել 2020թ.-ի ապրիլի 28-ից՝ իրական շահառուների վերաբերյալ հրապարակման ենթակա փաստաթղթերի ցանկն ընդլայնվել է:

Ի լրումն վերոնշյալ տեղեկատվության, այն նաև ներառում է՝

- շահառուների կառուցվածքը՝ համապատասխան ձևաթղթի վրա, որը թույլ է տալիս նույնականացնել իրական շահառուներին, այդ թվում է նրանց միջև վերահսկողական հարաբերությունները կամ այդպիսի իրական շահառուների բացակայությունը,
- քաղվածք, տեղեկանք կամ այլ փաստաթուղթ, որը հավաստում է իրավաբանական անձի հիմնադիրների գրանցումը, եթե հիմնադիրը ոչ ռեզիդենտ է,
- նոտարական վավերացմամբ փաստաթուղթ, որը հավաստում է իրական շահառուի ինքնությունը:



Նոր կարգավորումներով ներդրվել է նաև իրական շահառուների վերաբերյալ ներկայացված տվյալների ճշտության ստուգման համակարգ: Այն է՝

- պետական ռեգիստրի համար սահմանվել է պարտավորություն՝ ստուգելու ներկայացված տվյալների իսկությունը՝ դրանք համադրելով այլ պետական ռեգիստրներում և հասանելի փաստաթղթերում առկա տվյալների հետ:
- Ֆինանսական մոնիտորինգի գործակալները պետք է Ֆինանսական մոնիտորինգի պետական ծառայությանը տեղեկացնեն ընկերությունների գրանցամատյանում բացահայտված իրական շահառուների մասին, ինչպես նաև տվյալների ճշտության ստուգման ընթացքում հաճախորդներից ստացված տեղեկատվության որևէ անհամապատասխանության մասին:

Նոր փոփոխություններով ընդլայնվում է այն տեղեկատվության ցանկը, որը կարող է պահանջվել ֆինանսական մոնիտորինգի գործակալների կողմից, ինչը նպատակ ունի նույնականացնել և վերստուգել թրասթի իրական շահառուներին՝ այդ թվում հիմնադիրների, հոգաբարձուների, խնամակալների (առկայության դեպքում), շահառուների տվյալները, ինչպես նաև վճռորոշ ազդեցություն ունեցող այլ անձանց տվյալները:






Միացյալ Նահանգների փորձը

Միջազգային պրակտիկայի համատեքստում հարկ է նշել, որ չնայած խնդրի հրատապությանը, ԱՄՆ-ն այն երկրներից է, որը բավականին ուշ է հայտարարել իրական սեփականատերերի ռեեստր ստեղծելու նախաձեռնության մասին: Կորպորատիվ թափանցիկության մասին օրենքը, որը հրապարակվել է 2021 թվականի սկզբին, պարտավորեցնում է Միացյալ Նահանգներում գործող բիզնեսներին տեղեկատվություն տրամադրել իրենց իրական սեփականատերերի մասին: Օրենքը ուժի մեջ է մտնելու 2024-ի հունվարից: ԱՄՆ-ը նաև հիմք է դրել իրական սեփականատերերի կենտրոնական [ռեգիստրի ստեղծմանը](#):

Կազմակերպված հանցավորու-թյան և կոռուպցիայի լուսաբանման նախագծի (OCCRP) կողմից 2021-ի մայիսին հրապարակած [լրագրողական հետաքննությունը](#) պարզել էր, որ Թուրքմենստանի նախագահ Գուրբանգուլի Բերդյուկովի համեմատելի 25,7 միլիոն դոլարի պայմանագիր է կնքել պետական ֆինանսավորմամբ սննդամթերքի ներմուծման վերաբերյալ՝ Մեծ Բրիտանիայում գրանցված մի ընկերության հետ, որը նախկինում նման գործունեության փորձ չի ունեցել: Հանրային ռեգիստրի միջոցով ձեռք բերված տվյալներից պարզվել է, որ ընկերության իրական սեփականատերը եղել է նախագահի եղբորորդին՝ Հաջիմիրաթ Ռեջեփովը:



Ստորև բերված աղյուսակում ներկայացված են մի շարք երկրների բիզնես ռեգիստրները, որոնք պարունակում են տեղեկատվություն իրական շահառուների մասին:

Երկիր	Կայք	Նկարագրություն
Հայաստան	https://www.e-register.am https://bo.e-register.am/	Հայաստանի բիզնես և իրական շահառուների ռեգիստրը
Վրաստան	Registry of entrepreneurial and non-entrepreneurial (non-commercial) legal entities	Վրաստանի բիզնես ռեգիստրը
Էստոնիա	e-Business Register RIK	Իրական շահառուների էստոնական ռեգիստրը
Բելգիա	https://www.belgium.be/en	Բելգիայում գրանցված ընկերությունների ռեգիստր
Կիպրոս	Offshore Companies	Կիպրոսում գրանցված ընկերությունների ռեգիստրը, որը թույլ է տալիս որոնել ընկերության անունով կամ գրանցման համարով:

Երկիր	Կայք	Նկարագրություն
Ֆրանսիա	Infogreffe	Իրական շահառուների ֆրանսիական ռեգիստրը
Գերմանիա	Transparency Register	Իրական շահառուների գերմանական ռեգիստրը
Իտալիա	Registro Imprese	Իտալական ընկերությունների ռեգիստր, որն առաջարկում է տվյալների լայն շրջանակ:
Շվեյցարիա	Zefix.ch	Շվեյցարիայում գրանցված ընկերությունների ռեգիստր
Մավրիկիոս	MNS New Portal	Մավրիկիոսում ընկերությունների ռեգիստրը
Նամիբիա	http://www.bipa.na/search/	Նամիբիայում գրանցված ընկերությունների ռեգիստրը
Նիգերիա	https://publicsearch.cac.gov.ng/ComSearch/	Նիգերիայում գրանցված ընկերությունների ռեգիստրը
ՄեյՋեյան կղզիներ	Search Business	ՄեյՋեյան կղզիներում գրանցված ընկերությունների ռեգիստր

Երկիր	Կայք	Նկարագրություն
Հարավային Աֆրիկա	http://www.cipc.co.za/za/	Որոնման համակարգը տեղեկատվություն է տրամադրում Հարավային Աֆրիկայում գրանցված ընկերությունների մասին:
ԱՄՆ	LittleSis	Հարթակ, որը կօգնի բացահայտել քաղաքականության և բիզնեսի մեջ գտնվող անձանց (հիմնականում ԱՄՆ-ում)
	https://www.importyeti.com/	Տվյալների բազան պարունակում է ավելի քան 70 միլիոն գրառում՝ ԱՄՆ ռազմածովային անցակետից:
	https://apps.dos.ny.gov/publicinquiry/	Նյու Յորքի Կորպորացիայի և ձեռնարկատիրական կազմակերպությունների տվյալների ռեգիստրում առկա են բիզնես և ոչ շահութաբեր կորպորացիաների, սահմանափակ գործընկերությունների, սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների և այլ տարբեր բիզնեսների վերաբերյալ տեղեկություններ:

Չինաստան	https://www.gsxt.gov.cn/	Չինաստանում գրանցված ընկերությունները՝ գրանցված կապիտալի, օրինական ներկայացուցչի, գրանցման ամսաթվի, ինչպես նաև տուգանքների և բիզնեսի խախտումների պատմությունով:
	http://zxgk.court.gov.cn	Չինաստանում գործող անձանց և ընկերությունների ցուցակ, որոնց գործունեությունը դատարանի կողմից ճանաչվել է անբարեխիղճ:
	https://wenshu.court.gov.cn	Չինաստանի շրջանային դատարանների կողմից կայացված վճիռները
	http://www.cninfo.com.cn/	Չինաստանի հանրային ընկերությունների ֆինանսական հաշվետվությունները և հայտարարությունները
	https://www.qcc.com	Մասնավոր ընկերության կողմից ստեղծված կայք, որը ընկերությունների մասին տեղեկատվության ամենամեծ աղբյուրներից մեկն է՝ ներկայացնելով գրանցման տեղեկատվությանը, բաժնետերերի կառուցվածքին, իրական սեփականատիրոջը, թույլտվության վկայականին և այլն:

Իրական շահառուների գործունեության մշտադիտարկման և հետաքննության կարևորությունը

Իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրերը լրագրողների, քաղհասարակության ներկայացուցիչների համար չափազանց կարևոր և արժեքավոր աղբյուր են՝ բացահայտումներ և հետաքննություններ իրականացնելու համար: Հաճախ հանրային դեմքերը, պետական պաշտոնյաները և նրանց հետ փոխկապակցված անձինք, ինչպես նաև իրավախախտները ստեղծում են բարդ սխեմաներ՝ այս կամ այն կազմակերպությունում և ընկերությունում իրենց ներգրավվածությունն ու ազդեցությունը քողարկելու համար և այդպիսով չափազանց բարդ է լինում հասկանալ, թե ով է իրականում կանգնած ընկերության հետևում:

Այս մեխանիզմը հաճախ օգտագործվում է կոռուպցիայի, պետական միջոցների յուրացման, փողերի լվացման, կազմակերպված հանցավորու-

թյան, հարկերից խուսափելու և ֆինանսական այլ հանցագործությունների համար:

Իրական շահառուների հայտարարագրերն ու բացահայտումը կարող են արժեքավոր աղբյուր ծառայել լրագրողների համար

- իրականացնելու խորքային հետաքննություններ,
- բացահայտելու հանրային հետաքրքրության ոլորտներում գործունեություն իրականացնող կազմակերպությունների և ընկերությունների հետևում կանգնած անձանց,
- պարզելու՝ արդյոք պաշտոնյաներ կամ նրանց հետ փոխկապակցված անձինք ներգրավված են կամ որևէ ազդեցություն ունեն հանրային հետաքրքրության ոլորտներում գործունեություն իրականացնող կազմակերպություններում կամ ընկերություններում,



■ Բացահայտելու ընկերությունների միջև ոչ ակնհայտ կապերը, նույն անձի կողմից կառավարվող կամ տնօրինվող ընկերությունները:

Անձինք կարող են ներգրավվել մի քանի ընկերություններում տարբեր ձևերով: Հաճախ ընկերությունում ներգրավվածություն ասելով հասկացվում է միայն սեփականության իրավունքը, ինչը սակայն խիստ սահմանափակ ու ամբողջական չէ: Օրինակ՝ նույն անձը կարող է ղեկավարել «Ա» ընկերությունը և լինել նաև «Բ» ընկերության 50-ի տոկոսի բաժնետերը: Այս տեղեկությունը կարևոր է իմանալ, եթե օրինակ երկու ընկերությունն էլ հայտ է ներկայացնում մասնակացելու պետական գնումների միևնույն մրցույթին կամ եթե երկուսն էլ գնումների շղթայի մաս են կազմում: Այս բացահայտումները կարևոր քայլ կարող են լինել կոռուպցիոն ռիսկերի, շահերի բախման և իրավախախտումների նվազեցման ու կանխարգելման համար:


Լրագրողների՝ վերջին տարիներին իրականացրած հետաքննություններն ու բացահայտումները իրական շահառուների թափանցիկության բարձրացման հարցն առավել արդիական են դարձել: Վերջին տարիներին նրանք բացահայտել են բազմաթիվ կոռուպցիոն սխեմաներ և նշանակալից իրավախախտումներ, ընդ որում՝ իրական սեփականատերերի մասին տեղեկատվության հասանելիությունը վճռորոշ դեր է խաղացել այս դեպքերում:



Լրագրողական հետաքննությունը [բացահայտել է](#) ամենաաղմկահարույց կոռուպցիոն դեպքերից մեկը, որը վերաբերում է Ուզբեկստանի նախագահ Իսլամ Քարիմովի դստեր՝ Գուլնարա Քարիմովային: Շվեդական ՋԼՄ-ները սկսեցին բարձրաձայնել Քարիմովայի կողմից ենթադրյալ փողերի լվացման և ֆինանսական այլ հանցագործությունների մասին 2012 թվականին վերոնշյալ Կազմակերպված հանցավորության և կոռուպցիայի լուսաբանման նախագծի (OCCRP) հետ միասին: Անշարժ գույքի և շքեղ իրերի գնումների վերաբերյալ կասկածները հերքելու համար նախագահի դուստրը երկար ժամանակ թաքցնում է իր ունեցվածքը, իսկ լրագրողները չէին մոռանում հետևել Կարիմովայի օֆշորային հաշվին, որտեղից առանձնապես մեծ գումար է արտահոսել:

Շվեդիայի, իսկ ավելի ուշ՝ Նիդեռլանդների և Միացյալ Նահանգների պետական քննչական մարմինները շուտով ներգրավվեցին գործում: Ի վերջո [պարզվեց](#), որ Գուլնարա Քարիմովան ստացել է ավելի քան մեկ

միլիարդ դոլար կանխիկ գումար և բաժնետոմսեր տարբեր ընկերություններում՝ շվեդական, հոլանդական և ռուսական հաղորդակցության ընկերությունների՝ TeliaSonera և VimpelCom-ի մուտքը ուզբեկական շուկա աջակցելու դիմաց: Քարիմովան վստահված անձանց միջոցով վերահսկում էր Takilant-ը և Finex-ը: Takilant-ը պաշտոնապես պատկանում է նրա աշխատակցուհի Գայանե Ավակյանին, իսկ Finex-ը՝ Եկատերինա Կյուլսային: Գայանեն և Կյուլսան միասին աշխատել են Քարիմովայի նորաձևության տանը: Երկուսն էլ դրանից հետո ձեռքակալվել են Ուզբեկստանի իշխանությունների կողմից:



How The President's Daughter Controlled The Telecom Industry

Gulnara Karimova, the elder daughter of Uzbek President Islam Karimov, is being investigated for taking bribes for allowing Scandinavian and Russian telecom companies TeliaSonera and VimpelCom to operate in Uzbekistan. The Organized Crime and Corruption Reporting Project (OCCRP) has found new records that show she was far greedier and the scale of her alleged corruption was far wider than has been reported.



by Miranda Patricic
22 March 2015
OCCRP Regional Editor

Իրական շահառուների բացահայտման կարգավորումները՝ Հայաստանում

Հայաստանի Հանրապետությունն իրավաբանական անձանց իրական շահառուների բացահայտման արդյունավետ համակարգ ունենալու պարտավորություններ ստանձնել է մի շարք միջազգային փաստաթղթերով³ և [նախաձեռնություններով](#):

Հայաստանում իրական շահառուի բացահայտման ինստիտուտը ներդրվել է դեռ 2008թ.-ին՝ ընդունված «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» [օրենքով](#): Թեև որոշ այլ օրենքներով ևս նախատեսված է եղել իրական շահառուների բացահայտման պրակտիկա և ստեղծվել են որոշակի ռեեստրեր, սակայն դրանք հրապարակային չեն եղել:

Beneficial ownership հասկացությունը տարբեր ժամանակահատվածներում հայերեն թարգմանվել է և՛ որպես «իրական սեփականատեր», և՛ որպես «իրական շահառու»: 2021թ. սեպտեմբերի 1-ից Հայաստանում գործածության մեջ է մտել «իրական շահառու» եզրույթը:

Հայաստանում իրական շահառուների բացահայտման նոր փուլ սկսվեց 2017թ.-ից, երբ ՀՀ կառավարությունը, Բաց կառավարման գործընկերության 2014-2016թթ. գործողությունների երկրորդ ծրագրով սահմանված հանձնառությունների շրջանակում, նախաձեռնեց Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության (ԱՃԹՆ) միանալու գործընթացը և 2017թ. մարտի 9-ին [ՀՀ-ն դարձավ](#) ԱՃԹՆ թեկնածու անդամ: 2019-ին արդեն Ազգային ժողովն ընդունեց «Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին

³ OECD (2018), Anti-Corruption Reforms in Armenia Fourth Round of Monitoring of the Istanbul AntiCorruption Action Plan, Rec 20(7).



օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքը և «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» [օրենք](#): Ընդերքի մասին օրենսդրության փոփոխություններով մետաղական հանքարդյունաբերության ոլորտում գործունեություն իրականացնող իրավաբանական անձանց համար սահմանվեց իրական սեփականատերերի բացահայտման պարտականություն, որոնք 2020-ի հունվարի 1-ից պարտավորվեցին ներկայացնել ԻՇ հայտարարագիր: Որոշվել էր, որ հանքարդյունաբերության ոլորտում պիլոտային ծրագրով վեր հանել համակարգի օրենսդրական և գործնական խնդիրները և դրանց լուծում տալուց հետո համակարգը կիրառել իրավաբանական անձանց ավելի լայն շրջանակի համար:

2018թ.-ից ԻԱԿ-ն ակտիվ դերակատարում է ստանձնել իրական շահառուների թափանցիկության գործընթացում՝ նախաձեռնելով հանրային խորհրդակցություններ և սերտորեն համագործակցել ՀՀ կառավարության հետ՝ ԲԿԳ հայաստանյան 4-րդ ազգային գործողությունների ծրագրում իրական շահառուների թափանցիկության վերաբերյալ նոր հանձնառություն ընդունելու ուղղությամբ: Ի կատարումն այս հանձնառության՝ 2021-ի հունիսի 3-ին Ազգային ժողովն ընդունեց «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին [օրենք](#), որը իրական շահառուների մասին հայտարարագրերի ներկայացման կարգի և ժամկետների վերաբերյալ նախատեսում է մի շարք նոր կարգավորումներ:




Օրենքի համաձայն՝ ՀՀ տարածքում գրանցված իրավաբանական անձինք պարտավոր են իրենց իրական շահառուների վերաբերյալ տիրապետել արժանահավատ տեղեկությունների և ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն ներկայացնել իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր:

Հայաստանում իրական շահառուների հայտնաբերման համար օգտագործվում է հետևյալ մեխանիզմը.

Կազմակերպությունները, տվյալները պետք է ներկայացնեն առցանց՝ bo.e-register.am կայքի միջոցով: Իրական սեփականատերերի բացահայտման կառուցակարգերով նախատեսվում է, որ բացահայտման պարտականություն ունեցող իրավաբանական անձը յուրաքանչյուր տարի՝ մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա փետրվարի

20-ը, պետական ռեգիստր է ներկայացնում իրական սեփականատերերի վերաբերյալ հայտարարագիր, իսկ գրանցված տեղեկությունների փոփոխության դեպքում 40 օրվա ընթացքում իրավաբանական անձը պարտավոր է պետական ռեգիստր ներկայացնել իրական սեփականատերերի վերաբերյալ փոփոխված տեղեկությունները:



- Կազմակերպության ղեկավարումն իրականացնող անձը (օրինակ՝ գործադիր տնօրենը) պարտավոր է ողջամիտ ջանքեր գործադրել իր կազմակերպության իրական շահառուներին հայտնաբերելու և նրանց տվյալները ստանալու համար:
- Կազմակերպությունն այդ նպատակով կարող է հարցումներ անել իր մասնակիցներին, այդ թվում՝ մասնակից կազմակերպության ներկայացուցիչներին՝ խնդրելով տրամադրել իրական շահառուների մասին տեղեկություններ:
- Կազմակերպությունը կարող է նաև հարցումներ անել այն անձանց, ում իրական շահառու լինելու վերաբերյալ առկա են կասկածներ: Նշված անձինք պարտավոր են պատասխանել կազմակերպության հարցումներին 20 օրվա ընթացքում:
- Կազմակերպությունը ստանում է իրական շահառուների անձնական տվյալները և այդ անձանց իրական շահառու հանդիսանալը հիմնավորող փաստաթղթեր, ինչպես նաև

հայտարարագրի լրացման համար էական այլ փաստաթղթեր:

- Եթե կազմակերպության իրական շահառուն օտարերկրյա քաղաքացի է, ապա վերջինիս անձը հաստատող փաստաթղթերը վավերացված և թարգմանված ներկայացվում են Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն:

Մնացած բոլոր փաստաթղթերը չեն ներկայացվում Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն, սակայն պետք է պահպանվեն կազմակերպության կողմից ոչ պակաս, քան հինգ տարի, այն պահից երբ համապատասխան անձը դադարում է լինել կազմակերպության իրական շահառու:

Իրական շահառուների հայտարարագրման հետ կապված օրենսդրական կանոնների խախտումները կարող են առաջացնել երեք բնույթի հետևանքներ.



1. Վարչական պատասխանատվություն

Կազմակերպության պաշտոնատար անձի նկատմամբ վարչական պատասխանատվություն կարող է կիրառվել հետևյալ արարքների համար՝

- հայտարարագիրը չներկայացնելը,
- հայտարարագիրը կարգի խախտմամբ ներկայացնելը,
- անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելը,
- պատշաճ ուսումնասիրության կանոնները խախտելը:

Վարչական վարույթ հարուցելուց հետո մինչև վարչական պատասխանատվության ենթարկվելու վերաբերյալ որոշում կայացնելը օրենքի խախտումը շտկելու դեպքում անձը ենթակա չէ պատասխանատվության:

3. Կազմակերպության լուծարում դատական կարգով

Երեք տարի անընդմեջ հայտարարագիր չներկայացնելու կամ իրական շահառուների բացահայտման օրենսդրական կանոններն այլ կերպ բազմակի կամ կոպիտ խախտելու դեպքում Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունը կարող է դիմել դատարան՝ իրավաբանական անձի լուծարման պահանջով:

2. Քրեական պատասխանատվություն


Կազմակերպության պաշտոնատար անձի, իրական շահառուի կամ մասնակցի նկատմամբ քրեական պատասխանատվություն կարող է կիրառվել դիտավորությամբ կատարված հետևյալ արարքների համար՝

- կեղծ տվյալ ներկայացնելը կամ ներկայացման ենթակա տվյալը թաքցնելը,
- կազմակերպության մասնակցի կամ իրական շահառուի կողմից հայտարարագիրը ներկայացնող կազմակերպությանը կեղծ տվյալ ներկայացնելը կամ ներկայացման ենթակա տվյալը թաքցնելը կամ հարցմանը չպատասխանելը:



Որտե՞ղ և ինչպե՞ս են հրապարակվում հայտարարագրերը

Իրական շահառուների հայտարարագրերը հրապարակվում են ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի էլեկտրոնային համակարգում՝ bo.e-register.am կայքում:



Այստեղ հնարավոր է իրականացել որոնում ինչպես ըստ կազմակերպության, այնպես էլ՝ ըստ իրական շահառու ֆիզիկական անձի: Որոնում բաժնում անհրաժեշտ է գրել ընկերության անվանումը, այնուհետև գտնել կազմակերպությունը և սեղմել անվան վրա: Բացվող էջում երևում է ԻՇ հայտարարագիր ենթաբաժինը:

Սեղմելով «դիտել» կոճակը՝ կբացվի նոր էջ, որտեղ կլինեն ընկերության կողմից ներկայացված ԻՇ բոլոր հայտարարագրերը: Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել ամսաթվին՝ ամենաթարմ հայտարարագրին ծանոթանալու համար:

Իրական շահառուների հայտարարագրերում կարելի է գտնել տեղեկություն



Իրական շահառուների վերաբերյալ տեղեկությունները հնարավոր է

- ընկերությունում ուղղակի և անուղղակի մասնակցություն ունեցող անձանց, բաժնետերերի,
- ընկերություն նրանց մասնակցության մեկնարկի,
- մասնակցության չափի,
- գործադիր ղեկավար կազմի,
- ընկերության շահառուների քաղաքական ազդեցության կամ դրա բացակայության
- ընկերության բաժնետեր միջանկյալ ընկերությունների բաժնետերերի և ներգրավված այլ անձանց
- բաժնետերերի և իրական շահառուների քաղաքացիության, գրանցման և գործունեության վայրի վերաբերյալ:

- դիտել որպես հայտարարագիր անցանց եղանակով,
- դիտել գծապատկերով, որտեղ երևում է կազմակերպության սեփականության շղթան,
- տպել կամ պահպանել pdf ֆորմատով,
- ներբեռնել json ֆորմատով: JavaScript Object Notation ֆորմատը թույլ է տալիս տեքստային տվյալները ցուցադրել համակարգված տեսքով: Տվյալները ներբեռնելուց հետո դրանք կարելի վերլուծել համակարգչային այլ գործիքների օգտագործմամբ

Այս տվյալները բաց են և վճարման կամ գրանցման անհրաժեշտություն չկա:

Իրական շահառուների գործունեության մոնիտորինգի և հետաքննության գործընթացը

Ընկերությունների կամ անհատների մասին նոր տեղեկություններ ստանալու կամ հին տվյալները ստուգելու մի քանի եղանակներ կան: Համակցված մոտեցումը կօգնի մոնիտորինգ իրականացնող անձին ստանալ ճշգրիտ տեղեկատվություն, այդ թվում՝ պաշտոնական գրառումները, հանրային և պետական գնումները, հարցումները, սոցիալական մեդիան՝ բաց տվյալների, հանրային ռեգիստրների և ընկերությունների կայքերին օգտագործմանը զուգահեռ:


ԽՈՐՀՈՒՐԴ 1

Ընկերությունների իրական սեփականատերերին բացահայտելու/նույնականացնելու համար ստուգեք միջազգային հարթակներում և այլ երկրների իրական սեփականատերերի ռեգիստրներում հրապարակված տեղեկատվությունը.

Իրավաբանական անձանց իրական շահառուներին, նրանց՝ այլ ընկերությունների, անձանց հետ ունեցած կապը բացահայտելու մասով կարևոր և օգտակար աղբյուր են նաև միջազգային տարատեսակ ռեեստրները: Կարևոր է նշել, որ Հայաստանում տնտեսական գործունեություն հաճախ իրականացվում է թաքնված շահառուների կողմից, որոնք ներդրումներ են կատարում օֆշորային երկրներում


գրանցված ընկերությունների միջոցով, մասնակցում են ինչպես մասնավոր, այնպես էլ պետական նախագծերի իրականացմանը և այլն: Ավելի վաղ թվարկվել էին տարբեր երկրների ռեգիստրները: Դրանցից բացի ներկայացնում ենք տարբեր միջազգային հարթակներ, որտեղ հավաքագրվում են լրագրողներից ստացված տվյալներ, տարբեր արտահոսքեր և առանձին պաշտոնական ռեեստրներ:

Օֆշորային գոտիներից արտահոսված տվյալների բազա



[Հետաքննող լրագրողների միջազգային կոնսորցիումի \(ICIJ\) հարթակը](#) օֆշորային ընկերությունների վերաբերյալ ամենամեծ բազան է, որտեղ հրապարակվում են ընկերություններից, ինչպես նաև տարբեր կառույցներից արտահոսված տվյալներ՝ «Պանամական փաստաթղթեր», «Դրախտի թղթեր», «Պանդորայի փաստաթղթեր» և այլն: Ներկայում հարթակում առկա է տեղեկատվություն օֆշորային ավելի քան 810,000 ընկերության մասին, որոնք առնչվում են ավելի քան 200 երկրների:

Այս հարթակում առկա տեղեկատվությունը չափազանց արժեքավոր է հետաքննող լրագրողների և քաղաքացիական ներկայացուցիչների համար, քանի որ այն պարունակում է փակ կառույցների և ընկերությունների իրական սեփականատերերի մասին արտահոսված տեղեկություններ: Հարթակում առկա են նաև բազմաթիվ հետաքննություններ՝ տարբեր երկրների ներկա ու նախկին պաշտոնյաների անօրինական գործունեության վերաբերյալ:




Կազմակերպված հանցավորության և կոռուպցիայի լուսաբանման նախագիծ՝ OCCRP

Կազմակերպված հանցավորության և կոռուպցիայի լուսաբանման նախագծի (OCCRP) ստեղծած [ID հարթակը](#) հնարավորություն է տալիս տեղեկատվություն ստանալ ավելի քան 180 երկրներում գործող ընկերությունների, դրանց հասցեների, տարբեր ռեեստրների պաշտոնական հղումների վերաբերյալ:

OCCRP-ի մեկ այլ՝ [Aleph տվյալների հարթակը](#) միավորում է ինչպես գործող, այնպես էլ հին տվյալների բազաները, հարցումները, փաստաթղթերը և արտահոսած տեղեկությունների արխիվը՝ օգնելու հետաքննողներին բացահայտել քաղաքական կապերն ու կոռուպցիոն սխեմաների ազդեցությունը: Հիմնվելով ավելի քան 230 բաց աղբյուրների վրա՝ տեղեկատվությունը մշտապես թարմացվում է հարթակում: OCCRP-ի անդամ լրատվամիջոցներին և

լրագրողներին հասանելի են լրացուցիչ բազաներ ու տվյալներ: Հարթակի որոնողական համակարգը օգտվողներին հնարավորություն է տալիս տեղեկատվություն ստանալու տարբեր եղանակներ, ներառյալ՝ երկիրը, անձի անունը, էլ. հասցեն, ընկերության անվանումը, դատարանի որոշումները և այլն: Բացի այդ, կայքում տեղադրված տվյալները կարող են որոնվել ըստ բաժինների, ինչպիսիք են, օրինակ, ընկերության կայքերը, բանկային հաշիվները, լիցենզիաները, իրավաբանական անձինք, պետական հաստատությունները, ֆոտո և վիդեո նյութերը, էլ. նամակները և այլն:




Իրական սեփականատերերի համաշխարհային ռեգիստր՝ Open Ownership

[Իրական սեփականատերերի համաշխարհային ռեգիստրը](#), որը ստեղծվել է իրական շահառուների մասին բաց աղբյուրների հիման վրա, ներկայումս ներառում է ավելի քան 9 միլիոն ընկերությունների տվյալներ: Բաց կառավարման գործընկերության (OGP) հետ համագործակցությամբ հարթակը պարբերաբար ընդլայնում է տվյալների ծավալները այն երկրներից, որոնք պարտավորվել են ստեղծել իրական շահառուների հանրային ռեգիստր: Փնտրելով ձեզ հետաքրքրող ընկերության անուն, կարող ես տեսնել, թե որ երկրում է այն գրանցված, ինչ բաց տվյալներ կան այդ ընկերության մասին: Հարթակը ներկայացնում է նաև տվյալ ընկերության իրական շահառուների, տնօրենի անունները, հասցեն և այլ մանրամասներ:

Open Corporates

[Open Corporates-ը](#) ընկերությունների բաց տվյալների ամենախոշոր հարթակներից մեկն է, որը հասանելի է դարձնում ավելի քան 220,000 ընկերությունների կառուցվածքային տվյալներ լրագրողների և ՀԿ-ների համար: Որոնողական համակարգում ընկերություն որոնելիս օգտատերը կարող է ընտրել այն երկիրը/տարածքը, որի իրավասության ներքո նա փնտրում է ցանկալի տեղեկատվությունը: Հավելյալ տեղեկություններ կարելի է ձեռք բերել հավելվածի ինտերֆեյսի (API) գնման միջոցով:



ԽՈՐՀՈՒՐԴ 2

Մանրամասն ուսումնասիրեք ընկերության՝ պաշտոնական հաղորդակցության ուղիներով հրապարակված տեղեկությունները

Կարելի է սկսել ընկերության մասին տեղեկություններ փնտրել՝ ստուգելով նրանց պաշտոնական կայքը: Հասկապես հետաքրքիր նյութ կարելի է գտնել խոշոր կորպորացիաների դեպքում:

- Ուսումնասիրեք ընկերության պատմությունը և հիմնական նկարագրության բաժինը:
- Համապատասխան բաժնում փնտրեք ընկերության տարեկան հաշվետվությունները և դիտեք նախորդ տարիներին կատարված աշխատանքները կամ ձեզ անհրաժեշտ այլ մանրամասներ:
- Խորությամբ ուսումնասիրեք մամուլի հաղորդագրությունները: Այստեղ դուք կարող եք գտնել կարևոր և հետաքրքիր տեղեկություններ, որոնք դուրս են մնացել լրատվամիջոցների ուշադրությունից: Մամլո հաղորդագրությունը համարվում են ընկերության մասին պաշտոնական տեղեկատվության առաջնային աղբյուր և, հետևաբար, Դուք ազատ եք օգտագործելու մամուլի հին հաղորդագրությունները որպես տեղեկատվության աղբյուր:

ԽՈՐՀՈՒՐԴ 3

Օգտագործեք հայկական բաց աղբյուրների տեղեկությունները՝ իրական սեփականատիրոջ կամ նրանց հետ առնչվող ընկերությունների մասին տվյալներ հավաքելու համար:

Եթե միջազգային հարթակների/ռեզիստորների օգնությամբ բացահայտել եք որևէ ընկերության իրական սեփականատիրոջ, որը Հայաստանի քաղաքացի է, ունի որոշակի կապ Հայաստանի հետ, կամ օֆշորում գրանցված ընկերությունն ունի բաժնետոմս Հայաստանում գրանցված ընկերությունում, պետք է շարունակի որոնումը բաց աղբյուրների միջոցով:



Ինչպե՞ս ստանալ/ստուգել տվյալներ ընկերության մասին



Google նշան

Որոնողական համակարգերում՝ google.com, yandex.ru և այլն փնտրեք ընկերության անունը (ինչպես հայերեն տառերով, այնպես լատինատառ), հեռախոսահամարը և հասցեն: Ստուգեք ընկերության մասին առկա տեղեկությունները, հատկապես ուշադրություն դարձրեք ընկերության վերաբերյալ լրատվամիջոցների հրապարակումներին, ուսումնասիրեք դրանցում ներկայացված փաստերը:



Facebook նշան

Գտեք ընկերության ֆեյսբուքյան պաշտոնական էջը և ստուգեք «Մեր մասին» բաժինը: Ուշադրություն դարձրեք գրառումներին, ինչպես նաև դրանց հավանողներին (like) և մեկնաբանություններ անողներին: Ստուգեք՝ արդյոք ընկերությունն էջ ունի՞ Ինստագրամում: Այստեղ էլ ուշադիր զննեք ինչպես էջին հետևողներին, այնպես էլ, թե էջն ում է հետևում: Ստուգեք էջի գրառումները մեկնաբանողներին:



Search նշան

Մոցիալական ցանցերի հետ մեկտեղ ստուգեք, թե արդյոք ընկերությունն ունի ակտիվ պաշտոնական կայք և ստուգեք ընկերության իսկությունը: Զննեք ընկերության կայքում առկա տեղեկությունը:



Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստր

ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստր կայքում՝ e-register.am-ում փնտրեք Ձեզ հետաքրքրող ընկերության մասին տեղեկություն:

Որո՞նում բաժնում փնտրելու երկու եղանակ կա՝

■ ըստ գրանցված (հաշվառված) սուբյեկտի տվյալների. այս հատվածում կարող եք մուտքագրել ընկերության անվանումը կամ հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ): Վերջին տարբերակով առավել թիրախային է լինում որոնման արդյունքը:

■ Ըստ անձի տվյալների. այստեղ կարող եք որոնում կատարել անձի անունն ու ազգանունը, նրա անձնագրի սերիան կամ հանրային ծառայությունների համարանիշը (ՀՕՇ) մուտքագրելով: Անձնագրի կամ ՀՕՇ տվյալներով փնտրելով՝ արդյունքն առավել թիրախային է լինում: Անուն-ազգանվան դեպքում հնարավոր է հարյուրավոր այլ ընկերություններ ներկայացվեն, որոնք, սակայն, պատկանում են նույնանուն այլ անձի:



■ Ձեզ հետաքրքրող ընկերությունը գտնելուց հետո սեղմեք անվան վրա և նոր բացված էջում կտեսնեք այդ ընկերության գտնվելու **հասցեն**, **գրանցման համարը**, **ՀՎՀՀ կոդը**, ինչպես նաև **ԻՇ հայտարարագիրը**:




■ Սակայն ընկերության նախկին ու ներկա բաժնետերերի, ունեցած մասնակցության չափի, գործադիր ղեկավարների, նախկին անվանումների, իրավանախորդների և իրավահաջորդների, կանոնադրական կապիտալի, իրավական փաստաթղթերի մասին տեղեկություն ստանալու համար անհրաժեշտ է **գրանցվել ու վճարել** (մեկ ընկերության տվյալներն արժեն 3000 դրամ): Ինչպես նշեցինք, ԻՇ հայտարարագրերի դեպքում վճարել պետք չէ:

■ Գրանցվելուց և վճարելուց հետո կստանաք վերոնշյալ տվյալները: Բաժիններում կարելի է գտնել նաև ընկերության նկատմամբ կիրառված սահմանափակումները:

■ Կարևոր է ծանոթանալ նաև ընկերության փաստաթղթերին՝ հատկապես **կանոնադրությանը**: Դրանք կարևոր տեղեկություն են պարունակում ընկերության, դրանում տեղի ունեցած գործընթացների, բաժնետերերի, կազմակերպահրավական փոփոխությունների մասին:

■ Ուշադրություն դարձրեք նաև ընկերության անվան տակ առկա **ամսաթվերին**: Դրանք վկայում են, որ այդ օրերին ընկերությունում որևէ փոփոխություն է տեղի ունեցել՝ բաժնետեր կամ գործադիր ղեկավար է փոխվել և այլն: Հնարավոր է՝ ամենաթարմ տարբերակում որոշ տվյալներ արտացոլված չլինեն, այդ պատճառով սեղմեք ամսաթվերի վրա և ուսումնասիրեք առկա տեղեկությունները:

«ՋԱԳԵՂՈՒԻ ԳՂՆՁԱՄՈՒԻԲԵՆԱՅԻՆ ԿՈՍՄԻՍՍ» ՓԲԸ (Ուշադրություն, կիրառված է սահմանափակում)




 Իրական շահառուի հայտարարություն
  Տվեցու տարբերակ
  Կառավարման փոփոխություն

Առ 1994-07-26	Առ 1998-03-24	Առ 1998-12-17	Առ 2000-01-31	Առ 2003-04-01	Առ 2005-09-07	Առ 2005-09-14
Առ 2006-12-27	Առ 2007-12-24	Առ 2011-03-23	Առ 2011-10-31	Առ 2012-07-09	Առ 2012-12-04	Առ 2012-12-25
Առ 2014-05-23	Առ 2014-07-01	Առ 2015-03-23	Առ 2015-08-03	Առ 2015-12-14	Առ 2016-09-08	Առ 2017-12-11
Առ 2019-11-13	Առ 2020-02-25	Առ 2020-04-13	Առ 2020-10-28	Առ 2020-12-04	Առ 2021-02-02	Առ 2021-05-25
Առ 2021-08-09	Առ 2022-04-06	Առ 2022-04-29				

Ընկերության կարգավիճակն ու գործունեության տեսակը պարզելու համար այցելեք **Պետական եկամուտների կոմիտեի պաշտոնական կայք՝ petekamutner.am**, որի էլեկտրոնային ծառայություններ բաժնի՝ ՀՀ հարկ վճարողների փնտրման համակարգ ենթաբաժնում մուտքագրեք ընկերության ՀՎՀՀ կոդը (առկա է e-register.am-ում):

Այնուհետև պատճենեք գործունեության տեսակ տողի տակ առկա կոդը և մուտքագրեք նույն էլեկտրոնային ծառայություններ բաժնի՝ Տնտեսական գործունեության տեսակների դասակարգիչ ենթաբաժնում:


Ընկերության ֆինանսական ակտիվության, շահույթի վերաբերյալ տվյալներ հնարավոր է գտնել, եթե վերջինս 1000 խոշոր հարկ վճարողների ցանկում է: Այդ նպատակով ստուգեք petekamutner.am-ում հրապարակվող **[1000 խոշոր հարկատուների ցանկերը](#)**:



Ընկերությունների մասին կարևոր տեղեկություններ կարելի է ստանալ նաև **ՀՀ ինտերնետային ծանուցումների պաշտոնական կայքում՝ azdarar.am**-ում: Այստեղ կարելի է գտնել, օրինակ, ընկերության ֆինանսական հաշվետվությունները, դրա ներգրավմամբ դատական գործերը, ինչպես նաև պետության նկատմամբ ունեցած հարկային և այլ պարտավորությունների մասին տեղեկություններ: Այստեղ հրապարակվում են նաև կուսակցությունների տարեկանա ֆինանսական հաշվետվությունները, որտեղ առկա են նաև կուսակցությունների նվիրատուների տվյալները: Այս հաշվետվությունները ևս կարևոր աղբյուր են անձի մասնակցությամբ ընկերությունների քաղաքական կողմնորոշումը պարզելու համար:



Դատական տեղեկատվական համակարգը՝ datalex.am-ը ևս կարևոր աղբյուր է ընկերությունների՝ դատական գործերում ներգրավվածության մասին տեղեկատվություն ստանալու համար: Այստեղ առկա է տեղեկություն քաղաքացիական, քրեական, վարչական, սնանկության դատարաններում քննվող գործերի վերաբերյալ: Ընկերության անունը փնտրելով համապատասխան բաժիններում՝ կգնենքացվի դրա մասնակցությամբ դատական գործերն ու ողջ պատմությունը:



Ինչպե՞ս ստանալ/ ստուգել տվյալներ անձի մասին



Որոնողական համակարգերում փնտրեք անձի անունն ու ազգանունը (մուտքագրեք ինչպես հայատառ, այնպես էլ լատինատառ):


Եթե գիտեք հայրանունը, ապա անպայման այն ևս ներառեք՝ առավել թիրախային արդյունք ստանալու համար:



Գտեք նրա ֆեյսբուքյան հաշիվը, գնեք գրառումները, նկարները և ցանկացած այլ տեղեկություն: Ուշադրություն դարձրեք անձի հարազատներին, ընկերներին և ակտիվությանը: Ուսումնասիրեք նաև անձի **Ինստագրամի** և **LinkedIn**-ի էջերը, դրանք ևս արժեքավոր տեղեկություն կարող են պարունակել:



ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի պաշտոնական կայքում հրապարակավում է ՀՀ [ընտրողների ռեգիստրը](#): Այս տվյալների բազան կարևոր աղբյուր է անձի ընտանիքի անդամներին (կամ նրա հետ գրանցված անձանց), ծննդյան ամսաթիվը և հասցեն պարզելու համար:




Հայտարարագրերի ռեեստր

Եթե կասկածում եք, որ որոշ ընկերություններ կամ նրանց սեփականատերերը պետական պաշտոնյաների հետ ընտանեկան կապեր կամ կասկածելի գործարար հարաբերություններ ունեն, կարող եք ուսումնասիրել [գույքի և եկամուտների հայտարարագրերի ռեեստրը](#), որը ՀՀ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կայքում է հրապարակվում: Այստեղ կարելի է գտնել պաշտոնյայի ընտանիքի անդամների, ինչպես նաև նրա հետ համատեղ բնակվող անձանց մասին տեղեկություն:

Հայտարարագրերում ներառված են պետական պաշտոնյաների ծննդյան ամսաթիվը (ընտանիքի անդամների հայտարարագրում այս տեղեկությունը փակ է): Այն հատկապես օգտակար է, երբ շատ են նույնանուն մարդիկ: Մասնավորապես, օրինակ՝ որևէ ընկերության բաժնետերի տվյալները կարող եք վերցնել էլեկտրոնային ռեգիստրից՝ [e-register.am](#)-ից,

այնուհետև ընտրողների ռեգիստրում գտնեք նրա հասցեն, ինչպես նաև ծննդյան տվյալները: Այս տվյալները համեմատել պաշտոնյայի հայտարարագրում նշված տվյալների հետ և այսկերպ նույնականացնել նրան:



ԽՈՐՀՈՒՐԴ 4

Ուսումնասիրեք պետական գնումներում ընկերության մասնակցության մանրամասները:

Եթե Ձեզ հետաքրքրող իրական շահառուի հետ փոխկապակցված ընկերությունը հանդիպում է պետական գնումների մասնակիցների ցանկում, ապա արժե մանրամասնորեն ուսումնասիրել մասնակցության մանրամասները:

■ ՀՀ պետական գնումների հետ կապված տվյալներն ու փաստաթղթերը մեծամասամբ հասանելի են gnumner.am և armeps.am կայքերում, իսկ [մեկ անձից գնումները](#) տեղադրվում են նաև e-gov.am կայքում:

Գնման ողջ գործընթացին վերաբերող փաստաթղթերը՝ հրավերից մինչև վերջնական պայմանագիր տեղադրվում է Gnumner.am կայքում: Armepps.am-ում և e-gov.am-ում տեղադրվում են միայն վերջնական կնքված պայմանագիրը, որտեղ չի երևում, օրինակ, թե ինչ այլ ընկերություն էր մասնակցել այդ մրցույթին, ինչ գին էր առաջարկել և այլն:

Պետական գնումների ընթացակարգերը

- մրցույթ,
- էլեկտրոնային աճուրդ,
- գնանշման հարցում,
- մեկ անձից գնում:

Էլեկտրոնային և փակ մրցույթների ընթացակարգերը կիրառվում են, եթե ձեռքբերվող ծառայությունները կամ ապրանքները ներառված են կառավարության կողմից հաստատված ցանկի մեջ: Փակ մրցույթը հիմնականում կիրառվում է գաղտնիք պարունակող գնումների դեպքում:



Գնումների նախընտրելի ընթացակարգը մրցույթն է, երբ փաստացի ստեղծվում են հավասար պայմաններ բոլորի համար: Կա բավարար ժամանակ (առնվազն 40 օր) հայտեր ներկայացնելու համար: Իսկ առավել խնդրահարույց և ոչ մրցակցային ընթացակարգը մեկ անձից գնումներն են:

Գնումը կարող է կատարվել մեկ անձից, եթե`

- գնման ենթակա ապրանքը, աշխատանքը կամ ծառայությունը հնարավոր է ձեռք բերել միայն մեկ անձից, որը պայմանավորված է նրա հեղինակային և հարակից իրավունքներով, հատուկ կամ բացառիկ իրավունքի առկայությամբ:
- արտակարգ կամ չնախատեսված այլ իրավիճակի առաջացման հետևանքով ծագել է գնման անհետաձգելի պահանջ և, արտակարգ կամ չնախատեսված այլ իրավիճակից ելնելով, գնման այլ ձևերի կիրառումը ժամկետի առումով անհնար է, պայմանով, որ նման պահանջը հնարավոր չէր օբյեկտիվորեն կանխատեսել:

- գնման գինը չի գերազանցում գնումների բազային միավորը, և այլն:

Փաստացի` այլընտրանքի առկայության դեպքում, եթե չկա արտակարգ իրավիճակ, մեկ անձից իրականացվող գնումները չպիտանան խնդրահարույց են և կարող են կոռուպցիոն ռիսկեր պարունակել: Այդ պատճառով հատկապես այս ընթացակարգով կնքված պայմանագրերի ուսումնասիրությունն պարտադիր է:

Մեկ անձից կատարվող գնումներ


Տիրույթը ըստ մարզի:

Տիրույթը ըստ ստանդարտի:

Մարզի անվանում	Պետն անվանում	Պետն անվանում (անգլերեն)	Կապույտ	ՊՈՒ	Կապույտը	Պետն անվանում (անգլերեն)	Մարզական ժողովարան
ՀՀ Կոտայքի մարզի Կոտայքի մարզպետարան	Սևանա Կաթնամթեր, Կոտայքի մարզի Կոտայքի մարզպետարանի ԿՈՒՄԱՆԴԱ ԱՆՏԵՐՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ	Սևանա Կաթնամթեր, ԿՈՒՄԱՆԴԱ ԱՆՏԵՐՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ	010 555 555	010 555 555	010 555 555	010 555 555	2023-07-20 2023-07-20
Մարտիկի կոմիտեի համայնք	Պատրիարքարան	Պատրիարքարան	010 555 555	010 555 555	010 555 555	010 555 555	2023-07-20 2023-07-20
ՀՀ Կոտայքի մարզի Կոտայքի մարզպետարան	Սևանա Կաթնամթեր, Կոտայքի մարզի Կոտայքի մարզպետարանի ԿՈՒՄԱՆԴԱ ԱՆՏԵՐՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ	Սևանա Կաթնամթեր, ԿՈՒՄԱՆԴԱ ԱՆՏԵՐՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ	010 555 555	010 555 555	010 555 555	010 555 555	2023-07-20 2023-07-20
ՀՀ Կոտայքի մարզի Կոտայքի մարզպետարան	Սևանա Կաթնամթեր, Կոտայքի մարզի Կոտայքի մարզպետարանի ԿՈՒՄԱՆԴԱ ԱՆՏԵՐՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ	Սևանա Կաթնամթեր, ԿՈՒՄԱՆԴԱ ԱՆՏԵՐՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ	010 555 555	010 555 555	010 555 555	010 555 555	2023-07-20 2023-07-20
ՀՀ Կոտայքի մարզի Կոտայքի մարզպետարան	Սևանա Կաթնամթեր, Կոտայքի մարզի Կոտայքի մարզպետարանի ԿՈՒՄԱՆԴԱ ԱՆՏԵՐՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ	Սևանա Կաթնամթեր, ԿՈՒՄԱՆԴԱ ԱՆՏԵՐՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ	010 555 555	010 555 555	010 555 555	010 555 555	2023-07-20 2023-07-20

Ձեզ հետաքրքրող ընկերությունների հետ կնքված պայմանագրերը ուսումնասիրելու ամենամատչելի տարբերակը՝ armeps.am-ն է: Մուտք գործելով կայք՝ սեղմեք ձախ կոդում առկա հաշվետվություններ և վերլուծություններ բաժնի վրա, որից հետո կտեսնեք պայմանագրեր ենթաբաժինը: Այստեղ հնարավորություն է ստեղծված ուսումնասիրել կնքված պայմանագրերն ֆիլտրերի օգնությամբ՝ ըստ գնման առարկայի, պատվիրատուի, մատակարարի: Նշելով ժամանակահատվածը՝ այդ տվյալները կարելի է ներբեռնել ըստ excel և csv ֆորմատներով, որն առավել լայն հնարավորություն է ստեղծում:

Բացի այդ, եթե ցանկանում եք ուսումնասիրել այս կամ այն մրցույթի, այսպես ասած, պատմությունը՝ ովքեր են մասնակցել, ինչ գին են առաջարկել և այլն, ապա այս դեպքում կօգնի պայմանագրի ծածկագիրը: Անհրաժեշտ է պատճենել այն, և փնտրել gnummer.am-ի որոնման համակարգում: Նշենք, որ համակարգը լավ չի աշխատում և հնարավոր է որևէ արդյունք ցույց չտա:



Նշենք, որ ըստ ՀՀ գնումների մասին օրենքի՝ պետական գնումների մասնակիցները պարտավոր են ներկայացնել իրական շահառուների մասին հայտարարություն: Դրանք տեղադրվում են Gnumner.am կայքում՝ [Շահերի քախման բացակայության և իրական շահառուների տվյալների մասին հայտարարություններ](#) բաժնում: Սակայն այս բաժնում չկա ճկուն որոնման համակարգ, և հնարավոր չէ ընկերության անվամբ գտնել հայտարարությունը:



Կասկածելի երևույթներ գնումներում

- Հաղթողը ընտրվել է առանց մրցույթի (միակ մասնակիցն է եղել կամ մեկ անձից գնում է տեղի ունեցել):
- Հաղթող ընկերությունը գրանցվել է մրցույթի հրավերից քիչ առաջ:
- Հաղթող ընկերության սեփականատերերը կապված են պատվիրատու պետական մարմնի աշխատակիցների հետ կամ շահերի բախում ունեն մրցութային հանձնաժողովի անդամի հետ:
- Մրցույթի վերաբերյալ բողոք է ներկայացվել:
- Մեկ անձից գնման հիմնավորումը կասկածելի է:
- Ամենացածր գնով մասնակիցը մերժվել է:
- Միևնույն ընկերության հետ հաճախակի են կնքվում մեկ անձից գնման պայմանագրեր, կամ հաղթող ընկերությունը երբեք չի մասնակցել նմանատիպ մրցույթների:
- Մրցութային արժեքը շատ ավելի բարձր կամ շատ ցածր է ապրանքի միջին գնից:
- Հրավերում առկա տեխնիկազրույցում նշված են այնպիսի պայմաններ, որոնք հնարավոր են դարձնում մեկ ընկերության հաղթանակը:
- Կնքված պայմանագրում փոփոխություններ են կատարվել՝ ժամկետը երկարաձգվել է կամ թանկացել:
- Գնումները և/կամ պայմանագիրը հրապարակային չեն (էլեկտրոնային համակարգում հնարավոր չէ գտնել):



ԽՈՐՀՈՒՐԴ 5

Ստուգեք ընկերության հետ կապված անձանց, հատկապես բարձրաստիճան պաշտոնյաների մասին տեղեկությունները:

Ինչպես նշվեց վերևում, իրական շահառուները հաճախ օգտագործում են մերձավոր անձանց, ազգականի կամ ընտանիքի անդամի անունները՝ թաքցնելու իրենց ինքնությունը: Կան որոշակի առաջարկություններ, որոնք կօգնեն մոնիտորինգ իրականացնող անձին ընտրել այն գործիչներին, որոնք հնարավոր է ստեղծեն այս տեսակի շղթա՝ թաքցնելու իրենց ինքնությունը:

Նախ, պարբերաբար մոնիտորինգ կարող է իրականացվել կառավարության ղեկավարի, օրենսդիր մարմնի անդամների, նախարարությունների, դատական կամ ռազմական, իրավապահ մարմինների ներկայացուցիչների, պետական ձեռնարկությունների ղեկավարների և բարձրաստիճան այլ պաշտոնյաների նկատմամբ:

Բացի այդ, անհրաժեշտ է ստուգել նրանց հարազատների և մերձավոր անձանց մասին տեղեկությունները:





ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Հասցե՝ ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ

Էլ. փոստ՝ foi@foi.am

www.foi.am,

www.givemeinfo.am



Funded by
the European Union



Ուղեցույցը պատրաստվել և հրապարակվել է «Ինֆորմացիայի ազատության կենտրոն ՆԿ-ի կողմից «Տեղեկատվության Իմատչելիության բարեփոխում և իրական շահառուների թափանցիկությունը Հայաստանում» ծրագրի շրջանակներում: Այն ֆինանսավորվել է Եվրոպական միության կողմից «Արևելյան գործընկերություն. Բաց դռների դրամաշնորհներ» ենթադրամաշնորհային նախագիծը՝ «ԵՄ-ն քարեվարքության համար» ծրագրի շրջանակներում: